# ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
# <<ԿԱՄՔ>>
# ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Ծախի 19, հեռ. (+374 .44.) 77.17.79., էլ. փոստ՝ info@kamq.am


Երևանի քաղաքապետ՝
պարոն Հայկ Մարությանին

ՀՀ Ոստիկանության պետ՝
պարոն Վահե Ղազարյանին


ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ «ԿԱՄՔ» հասարակական
նախաձեռնության հիմնադիր՝
Վահագն Չախալյանից
Հեռ. +374 93 21 74 70
E-mail: chakhalyanv@gmail.com


09.09.2020թ.

## ԴԻՄՈՒՄ

### ՀԱՆՐԱՅԻՆ ԾՏԱՊ ՀԱՎԱՔ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով (Հոդված 27 Ինքնաբուխ և շտապ հավաք անցկացնելու կարգը)՝ իրազեկում ենք լիազոր մարմնին և ՀՀ Ոստիկանությանը, որ 2020 թվականի սեպտեմբերի 17-ին ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության շենքի դիմաց (հասցե՝ Վազգեն Սարգսյան փող., 3 շենք, Կառավարական տուն 2) ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ «ԿԱՄՔ» հասարակական նախաձեռնության հիմնադիր Վահագն Չախալյանի գլխավորությամբ նախատեսվում է իրականացնել շտապ հավաք, խաղաղ բողոքի ակցիա՝ ուղղված «ՀՀ ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանի հրաժարական տալու» պահանջին:

186179 3


ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
[illegible]
№ 20/92738 0909 20

Հավաքը մեկնարկելու է ժամը 17:00-ին և ավարտվելու է ժամը 23:00-ին:

Կարգադրիչների մոտավոր թիվը՝ 15, իսկ հավաքի մասնակիցների թիվը՝ անհայտ:

Հավաքի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցներն են՝ բարձրախոսներ, դինամիկներ, ամբիոն, դրոշներ, պլակատներ, նկարներ:

Խնդրում եմ Ձեզ՝ շտապ խաղաղ հավաքի անցկացման ընթացքում ապահովել Շտապօգնության բրիգադի ներկայություն, էլեկտրական հոսանքի առկայություն հավաքի վայրում, թույլատրել դինամիկները տեղադրել կամարի տակ գտնվող աստիճաններին, ինչպես նաև կամարի տակ գտնվող աստիճաններից ուղիղ գծով 50 մետր հեռավորությամբ՝ մայթեզրի երկայնքով 30 մ երկարությամբ թույլ չտալ կայանել ավտոմեքենաներ և ոստիկանական մեքենաներ:

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ խնդրում եմ պետության կողմից ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքի բնականոն ու խաղաղ ընթացքն ապահովելու նպատակով:

Դիմող՝

Վահագն Չախալյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ «ԿԱՄՔ»
Հասարակական նախաձեռնության հիմնադիր